ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ 07/2025-Ա/Վ

ԱԼԲԵՐՏ ԱԲԳԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԽԱԽՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 3 նոյեմբերի, 2025 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդական Ալբերտ Աբգարյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2025 թվականի օգոստոսի 4-ին հարուցված թիվ 07/2025-Ա/Վ վարույթի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Նախապատմություն

1 Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման պլանով հաստատված միջոցառումների հիման վրա իրականացված ուսումնասիրության, այդ թվում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական

հարցերի նախարարի խորհրդական Ալբերտ Աբգարյանի վերաբերյալ իրականացված ուսումնասիրության արդյունքում պարզել է հետևյալը՝

1.1ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՊԵԿ) տեղեկատվական շտեմարանի տվյալների համաձայն՝ Ալբերտ Աբգարյանը 2019 թվականի սեպտեմբերի 23-ից մինչ օրս զբաղեցնում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի (այսուհետ՝ նաև Կոնսերվատորիա) ներառական կրթության գծով ռեկտորի խորհրդատուի պաշտոնը:

1.2 ՊԵԿ տեղեկատվական շտեմարանի, ինչպես նաև Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքի տվյալների (https://www.mlsa.am/staff-of-the-minister) համաձայն՝ Ալբերտ Աբգարյանը 2020 թվականի մայիսի 11-ին ստանձնել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդականի պաշտոնը:

1.3 Պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և ծախսերի 2021, 2022, 2023 և 2024 թվականների տարեկան հայտարարագրերում Ալբերտ Աբգարյանը հայտարարագրել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայից ստացված եկամուտներ՝ համապատասխանաբար՝ [redacted]

1.4 Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը 2025 թվականի հուլիսի 17-ին թիվ 01/2855-2025 գրությամբ հարցում է ուղարկել Ալբերտ Աբգարյանին՝ տրամադրելու պարզաբանում՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում կատարված աշխատանքի բնույթի և ստացված եկամտի վերաբերյալ՝ միաժամանակ տրամադրելով եկամտի ստացման հիմքը (պայմանագրի կրկնօրինակը):

1.5 Ի պատասխան վերոնշյալ գրությանը՝ սույն թվականի հուլիսի 22-ին Ալբերտ Աբգարյանից ստացվել է պարզաբանում, համաձայն որի՝ վերջինս Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում «մեկ աշխատանքային պայմանագրով իրականացնում է դասախոսի աշխատանք, իսկ մյուս պայմանագրով՝ կրթության գծով ռեկտորի խորհրդատուի աշխատանք՝ ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը նպաստող և (կամ) դրանք ապահովող աշխատանք՝ դասախոսների և ուսանողների

համար՝ ելնելով ուսանողների ֆիզիկական սահմանափակումներից և կարիքներից (հաշմանդամություն ունեցող ուսանողներ)»:

1.6 Նշված պարզաբանմանը կից Ալբերտ Աբգարյանը Հանձնաժողով է ներկայացրել «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի ռեկտոր Սոնա Հովհաննիսյանի և իր միջև կնքված աշխատանքային պայմանագրերը, մասնավորապես.

2019 թվականի սեպտեմբերի 20-ին Ալբերտ Աբգարյանի և «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի ռեկտոր Սոնա Հովհաննիսյանի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Ալբերտ Աբգարյանն ընդունվել է աշխատանքի վարչա-ադմինիստրատիվ անձնակազմում՝ որպես ներառական կրթության գծով ռեկտորի խորհրդատու՝ ժամավճարային սկզբունքով: Ըստ նույն պայմանագրի՝ աշխատողը պարտավոր է՝ ելնելով ուսանողի ֆիզիկական սահմանափակումներից և կարիքներից՝ խորհրդատվություն իրականացնել ֆիզիկական խնդիրներ ունեցող ուսանողների հետ դասապրոցեսն արդյունավետ կազմակերպելու նպատակով: Խորհրդակցությունը կարող է տրվել ինչպես դասախոսներին, այնպես էլ ֆիզիկական խնդիր ունեցող ուսանողներին: Պայմանագիրը կնքվել է անորոշ ժամկետով: Աշխատողի՝ Ալբերտ Աբգարյանի համար սահմանվել է ոչ լրիվ աշխատաժամանակ՝ շաբաթական 20 ժամ: Այլ գործառույթներ պայմանագրով չեն նշվել:

2023 թվականի փետրվարի 7-ին Ալբերտ Աբգարյանի և «Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա» ՊՈԱԿ-ի ռեկտոր Սոնա Հովհաննիսյանի միջև կնքված պայմանագրի համաձայն՝ Ալբերտ Աբգարյանն ընդունվել է աշխատանքի Հումանիտար գիտությունների ամբիոնում՝ որպես դասախոս՝ ժամավճարային սկզբունքով:

1.7 Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տեղեկատվական համակարգում առկա՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի կանոնադրության 24-րդ կետի համաձայն՝ կոնսերվատորիայի ռեկտորատը ռեկտորին կից խորհրդակցական մարմին է, իսկ 25-րդ կետի համաձայն՝ ռեկտորատի կազմի մեջ են մտնում ռեկտորը, (...), ռեկտորի օգնականը և խորհրդականը: Միաժամանակ, խորհրդատուի պաշտոնի անձնագիր Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում առկա չէ: Խորհրդատուի կողմից

իրականացվող աշխատանքի բնույթը սահմանվում է վերջինիս հետ կնքված պայմանագրի համապատասխան դրույթներով:

1.8 Վերոգրյալի հիման վրա՝ 2025 թվականի օգոստոսի 4-ին Հանձնաժողովը կայացրել է թիվ 07/2025-Ա/Վ որոշումը՝ Ալբերտ Աբգարյանի նկատմամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին:

1.9 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի օգոստոսի 4-ին թիվ 01/3132-2025 գրությամբ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը փոստային ծառայության միջոցով, ինչպես նաև էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվել է Ալբերտ Աբգարյանին՝ միաժամանակ պահանջելով ներկայացնել պարզաբանում վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ՝ կցելով փաստարկների հիմնավորվածությունը հավաստող նյութեր:

1.10 2025 թվականի օգոստոսի 15-ին Ալբերտ Աբգարյանի կողմից Հանձնաժողով է ներկայացվել դիրքորոշում և Կոնսերվատորիայի ռեկտորի պաշտոնակատարի կողմից տրված տեղեկանքը:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթում քննարկվող առերևույթ խախտումների վերաբերյալ 2025 թվականի օգոստոսի 15-ին Ալբերտ Աբգարյանի կողմից ներկայացվել է պարզաբանում հետևյալ բովանդակությամբ.

«Ի պատասխան Ձեր 2025 թվականի օգոստոսի 5-ի թիվ 01/3132-2025 գրության և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի N 07/2025-Ա/Վ որոշման (այսուհետ՝ Որոշում)՝ հայտնում եմ (...):

Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 7-ի N1920-Ն որոշման 2-րդ կետով հաստատված՝ Կոնսերվատորիայի կանոնադրության 25-րդ կետի Ռեկտորատի կազմի մեջ են մտնում նաև ռեկտորի օգնականը և խորհրդականը, բայց ոչ

խորհրդատուն: Ռեկտորի խորհրդականի և խորհրդատուի պաշտոնները տարբեր պաշտոններ են: Ռեկտորի խորհրդատուն չի մասնակցում ռեկտորատի նիստերին և չի մասնակցում նաև Կոնսերվատորիայի կառավարման աշխատանքներին, այլ իրականացնում է բացառապես կրթական աշխատանք:

Բացի այդ, ես խորհրդատվություն չեմ մատուցում ռեկտորին, այլ նախորդ գրությամբ ուղարկված աշխատանքային պայմանագրից հստակ երևում է նաև, որ ես խորհրդատվություն եմ մատուցում բացառապես դասախոսների և ֆիզիկական խնդիրներ ունեցող ուսանողներին՝ դասապրոցեսն արդյունավետ կազմակերպելու նպատակով:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 13-րդ մասի՝ կրթական աշխատանք է համարվում նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող և (կամ) դրանք ապահովող այլ աշխատանք կատարելը: (...):»:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

3.1 Ալբերտ Աբգարյանը 2020 թվականի մայիսի 11-ին ստանձնել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդականի պաշտոնը**:**

3.2 Ալբերտ Աբգարյանը 2019 թվականի սեպտեմբերի 23-ից մինչ օրս զբաղեցնում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ներառական կրթության գծով ռեկտորի խորհրդատուի պաշտոնը՝ ժամավճարային սկզբունքով:

3.3 Ալբերտ Աբգարյանը 2023 թվականի փետրվարի 7-ից հանդիսանում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Հումանիտար գիտությունների ամբիոնի դասախոս՝ ժամավճարային սկզբունքով:

3.4 Ալբերտ Աբգարյանը 2025 թվականի օգոստոսի 26-ից ազատվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդականի պաշտոնից:

IV. Անհամատեղելիության պահանջին առաջադրվող օրենսդրական կարգավորումներ

4.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային:

4.2 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական: Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պետական հայեցողական պաշտոն է նաև նախարարի խորհրդականի պաշտոնը:

4.3 Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

4.4 Օրենքի 31-րդ հոդվածի 13-րդ մասը սահմանում է, որ սույն օրենքի իմաստով՝ կրթական աշխատանք է համարվում ուսուցիչ, դասախոս (ասիստենտ) աշխատելը կամ հանրակրթական և մասնագիտական (հիմնական, լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների պահանջների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը նպաստող և (կամ) դրանք ապահովող այլ աշխատանք կատարելը:

4.5 Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողները պաշտոնում նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պարտավոր են ապահովել սույն հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների կատարումը:

4.6 Նույն հոդվածի 17-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձի և հանրային ծառայողի կողմից սույն հոդվածով նախատեսված անհամատեղելիության պահանջները խախտելը նրա լիազորությունների դադարեցման կամ նրան զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք է:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, (...) առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ:

4.8 Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը վարույթի արդյունքում ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին (...):

4.9 Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման մասին եզրակացությունը և այդ առնչությամբ վարույթի բոլոր փաստաթղթերը, նյութերը եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում են պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով նրա լիազորությունները դադարեցնելու հարցը քննարկելու (քննելու) իրավասություն ունեցող մարմիններ:

4.10 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

V. Հանձնաժողովի պատճառաբանություններն ու եզրահանգումը

Վերոնշյալ օրենսդրական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ նախարարի խորհրդականի՝ պետական հայեցողական պաշտոնը հանդիսանում է հանրային պաշտոն, որի նկատմամբ կիրառելի են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անհամատեղելիության պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ ի թիվս այլ սահմանափակումների, հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները չեն կարող կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

Վարույթի իրականացման ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Ալբերտ Աբգարյանի՝ նախարարի խորհրդականի լիազորությունները դադարեցվել են 2025 թվականի օգոստոսի 26-ին: Այսինքն, Ալբերտ Աբգարյանը 2025 թվականի օգոստոսի 26-ից դադարել է հանրային պաշտոն զբաղեցնող անձ հանդիսանալուց, ուստիև «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված, հանրային պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ սահմանափակումների սուբյեկտ հանդիսանալուց: Այլ կերպ ասած՝ 2025 թվականի օգոստոսի 26-ից սկսած (դեռևս սույն վարույթի ընթացիկ փուլում գտնվելու ժամանակահատվածում) Ալբերտ Աբգարյանի նկատմամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի դրույթների գործողությունը չի տարածվում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի վերլուծությունից բխում է, որ այն դեպքերում, երբ տեղի է ունեցել իրավիճակի փոփոխություն, որը կապված չէ օրենքի կամ իրավական այլ ակտերի պահանջների խախտման կամ դրանց կանխման հետ, կամ որևէ այլ օրենքով նախատեսված հիմքի առկայության պարագայում վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Տվյալ դեպքում սույն վարույթը հարուցվել է վարչական մարմնի նախաձեռնությամբ՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով՝ անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման

պլանով նախատեսված միջոցառումների շրջանակում իրականացված ուսումնասիրության արդյունքում՝ առերևույթ խախտում հայտնաբերելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի» հիմքով վարույթի կարճման հիմքերի կիրառելիության հարցը գնահատելիս՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավակարգավորումներին.

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավանորմի համաձայն՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարույթը պետք է եզրափակվի Հանձնաժողովի կողմից եզրակացության ընդունմամբ՝ պաշտոն զբաղեցնող անձի կողմից (...) անհամատեղելիության պահանջների խախտման առկայության կամ բացակայության մասին:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման մասին եզրակացությունը և այդ առնչությամբ վարույթի բոլոր փաստաթղթերը, նյութերը եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում են պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով նրա լիազորությունները դադարեցնելու հարցը քննարկելու (քննելու) իրավասություն ունեցող մարմիններ:

Վերոնշյալ իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցվող վարույթում վարչական մարմինը պարտավոր է գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն իրականացնել հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից օրենքով սահմանված պահանջների առերևույթ խախտման հաստատման կամ հերքման համար անհրաժեշտ պարզման ենթակա հանգամանքների կապակցությամբ, արդյունքում լուծել հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործը՝ հաստատելով հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից խախտման առկայության կամ բացակայության փաստը:

Սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների և վերոնշյալ իրավական նորմերի պահանջների վերլուծության համադրմամբ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Ալբերտ Աբգարյանի՝ որպես ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդականի 2025 թվականի օգոստոսի 26-ից

լիազորությունները դադարեցված լինելու հանգամանքով պայմանավորված՝ տեղի է ունեցել իրավիճակի փոփոխություն, որով պայմանավորված վերացել է Հանձնաժողովի կողմից վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը, մասնավորապես, հետևյալ պատճառաբանությամբ.

Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար օրենսդրությամբ սահմանված որոշակի արգելքների ու սահմանափակումների հիմնական նպատակը կոռուպցիայի կանխարգելումն է, այդ թվում՝ շահերի հնարավոր բախման իրավիճակների բացառումը:

Օրենսդրորեն նախանշված անհամատեղելիության պահանջների պահպանման նպատակին է ուղղված նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումը, համաձայն որի՝ պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման մասին եզրակացությունը և այդ առնչությամբ վարույթի բոլոր փաստաթղթերը, նյութերը եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում են պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով նրա լիազորությունները դադարեցնելու հարցը քննարկելու (քննելու) իրավասություն ունեցող մարմիններ:

Այսինքն, օրենսդրի կողմից հետապնդվող նպատակը կոռուպցիայի կանխարգելումն է, այդ թվում՝ շահերի հնարավոր բախման իրավիճակի բացառումը, պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունները դադարեցնելու միջոցով:

Նշված իրավանորմերի բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ Օրենսդիրը նախատեսել է անհամատեղելիության պահանջների խախտման առկայության կամ բացակայության մասին եզրակացության կայացման պահին անձի կողմից հանրային պաշտոն զբաղեցնելու էական հանգամանքը, ինչը տվյալ դեպքում բացակայում է՝ պայմանավորված Ալբերտ Աբգարյանի՝ որպես նախարարի խորհրդականի պաշտոնի դադարեցման հանգամանքով:

Միաժամանակ, նշված հանգամանքների համատեքստում Հանձնաժողովին վերապահվել է նաև պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման մասին եզրակացությունը նրա լիազորությունները դադարեցնելու հարցը քննելու իրավասություն ունեցող մարմիններին ուղարկելու լիազորությունը որի արդյունքում իրավասու մարմինները քննարկում են պաշտոն

զբաղեցնող անձի լիազորությունների դադարեցման հարցը, ինչն իր հերթին ենթադրում է, որ օրենսդիրը պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման հետևանքների վերացումը պայմանավորել է բացառապես պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունների դադարեցմամբ:

Վերոշարադրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով Հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման առկայության կամ բացակայության եզրակացության ընդունման անհրաժեշտությունը վերացել է:

Ելնելով ամբողջ վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով և նույն հոդվածի 3-րդ մասով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի խորհրդական Ալբերտ Աբգարյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2025 թվականի օգոստոսի 4-ին հարուցված թիվ 07/2025-Ա/Վ վարույթը կարճել:

2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Ալբերտ Աբգարյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ